ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՉԱՓԱՆԻՇՆԵՐԸ

Ընտրովի պատասխանով առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Կարճ պատասխանով առաջադրանքների յուրաքանչյուր ճիշտ պատասխանի համար տրվում է 1 միավոր:

Ուղղագրության վերաբերյալ առաջադրանքի յուրաքանչյուր ճիշտ գրված բառի համար տրվում է 1 միավոր (ընդամենը՝ 5 միավոր):

Կետադրության վերաբերյալ առաջադրանքի ճիշտ կետադրման համար տրվում է 1 միավոր: Եթե տվյալ կետադրական կանոնը պահանջում է 2 կետադրական նշան (օրինակ՝ կոչականը՝ շեշտ և ստորակետ), ապա 1 միավոր է տրվում այն դեպքում, եթե 2 նշանն էլ ճիշտ են դրված:

Ցանկացած այլ (ավելորդ կամ սխալ) կետադրական նշանի գործածության դեպքում այս առաջադրանքին միավոր չի տրվում, եթե անգամ ճիշտ նշանակված է պահանջվող կետադրությունը:

Որոշ կետադրական նշաններ (օրինակ՝ ուղղակի խոսքի անջատման գիծը) դրված են այն պատճառով, որ աշակերտը դեռևս ծանոթ չէ կետադրական տվյալ կանոններին, իսկ առանց դրանց նախադասությունը կարող է անհասկանալի լինել: Այդ նշանների բաց թողնումը աշակերտի կողմից պետք է համարել անուշադրության սխալ: Այդպիսի սխալների համար միավոր չի հանվում:

Ընդարձակ պատասխանով առաջադրանքներ.

Տեքստի վերաբերյալ տրվող հարցերից յուրաքանչյուրի ճիշտ պատասխանի համար տրվում է 1-ական միավոր, եթե հարցի պատասխանը ըստ տեքստի ճիշտ է: Քերականական և ուղղագրական սխալները հաշվի չեն առնվում:

ԳՆԱՀԱՏՄԱՆ ՍԱՆԴՂԱԿԸ

Միավորը	Գնահատականը
1	1
2-3	2
4-5	3
6-7	4
8-10	5
11-13	6
14-15	7
16-17	8
18-19	9
20	10